ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 163

09 հունիսի 2021թ.

Լոռու մարզի մարզպետ
Պարոն Ա.Խաչատրյանին

Ի պատասխան Ձեր 17.01.2020թ.-ի թիվ 01/107/3/00404-2020 գրության Եղեգնուտի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու 15.06.2021թ.-ին հրավիրված հերթական նիստի մասին տեղեկացումը, նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Հակոբյան

# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Եղեգնուտ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Եղեգնուտ** | Ավագանու հերթական նիստ | 15.06.2021թ. | 10:00 | **Եղեգնուտ համայնքի** համայնքապետարանի շենք (գ.Եղեգնուտ, 3-րդ փող. թիվ 2) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. հունիսի 15-ին՝ ժամը 10.00-ին Եղեգնուտի համայնքապետարանի շենքում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

**ժամը՝ 10.00**

1. Հայաստանի Հանրապետության Եղեգնուտ համայնքի ավագանու 2020թ.-ի դեկտեմբերի 28-ի «Եղեգնուտ համայնքի 2021թ.-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 24-Ն որոշման մեջ կատարել փոփոխությունններու մասին:

   զեկ. Մ.Ալիխանյան

2. Որպես համայնքային սեփականություն ձեռք բերված գույքը հաշվեկշիռ մուտքագրելու և համայնքային ենթակայության տակ գտնվող ՀՈԱԿ-ում գտնվող ոչ պիտանի գույքը հաշվեկշռից դուրս գրելու մասին:

   զեկ. Մ.Ալիխանյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

   զեկ. Կ.Ավետիքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՆԱԽԱԳԻԾ

# ՈՐՈՇՈՒՄ

« 15 » հունիսի 2021 թվականի N 13-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի «ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Եղեգնուտ համայնքի ավագանու 2020թ.-ի դեկտեմբերի 28-ի «Եղեգնուտ համայնքի 2021թ.-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 24-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ 1, 2, 3, 4, 5, 6 հատվածներում:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աղաջանյան Գառնիկ | | | |
| Գալստյան Սեյրան | | | |
| Գրիգորյան Լիդիյա | | | |
| Կարապետյան Գրիգոր | | | |
| Պողոսյան Արթուր | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ ____________________ Ս.Հակոբյան
անուն ազգանուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՆԱԽԱԳԻԾ

## ՈՐՈՇՈՒՄ

« 15 » հունիսի 2021 թվականի N 14

## ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԱՇՎԵԿՇԻՌ ՄՈՒՏՔԱԳՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈԱԿ_ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԸ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Համայնքի ավագանին որոշեց.

1. Որպես նվիրատվություն ձեռք բերված 1.770.340 ՀՀ դրամ արժեքով մանկապարտեզի գույքը մուտքագրել համայնքի հաշվեկշիռ՝ որպես համայնքային սեփականություն՝ համաձայն հանձնման ակտի:
2. Որպես նվիրատվություն ձեռք բերված 2.233.000 ՀՀ դրամ արժեքով խաղահրապարակի գույքը մուտքագրել համայնքի հաշվեկշիռ՝ որպես համայնքային սեփականություն՝ համաձայն հանձնման ակտի:
3. Համաձայն գույքագրման հանձնաժողովի կողմից կազմված ակտի համայնքի մանկապարտեզից դուրս է գրվել 77.000 ՀՀ դրամ արժեքով ոչ պիտանի գույք՝ համաձայն դուրս գրման ակտի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աղաջանյան Գառնիկ | | | |
| Գալստյան Սեյրան | | | |
| Գրիգորյան Լիդիյա | | | |
| Կարապետյան Գրիգոր | | | |
| Պողոսյան Արթուր | | | |
| | | | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գ. Եղեգնուտ
էլ. փոստ՝ yeghegnut.lori@mta.gov.am

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 15 » հունիսի 2021 թվական, թիվ 15-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 02-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աղաջանյան Գառնիկ | | | |
| Գալստյան Սեյրան | | | |
| Գրիգորյան Լիդիյա | | | |
| Կարապետյան Գրիգոր | | | |
| Պողոսյան Արթուր | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՝ __________________ Ս.Հակոբյան

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

**Հավելված**
**ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի ավագանու**
**2021 թվականի հունիսի 15 -ի N 15-Ա որոշման**

**ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Արայիկ Ռաֆիկի Ղազարյան ---- քսանհինգ հազար դրամ, սոց. օգնություն
2. Արթուր Հրաչիկի Ղազարյան ---- քառասուն հազար դրամ, սոց. օգնություն

Ընդամենը՝ վաթսունհինգ հազար դրամ:

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________________ Կ.ԱՎԵՏԻՔՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)